

Ամասիոյ վերատեսչին,
 Երբեմն Պոլսոյ պատրիարքին:
 Սոյն Չարխափան վանս շինողին,
 Բարի կարգօք հաստատողին.
 Յանապատի վարս կրթողին,
 Պաղտատցի Մակ վերաձայնողին:
 Սուրբ Սաղիմայ մեծ ծառային,
 Ի Հինդ Երթող նուիրակին,
 Էջմիածնի սերտ մտերմին,
 Աշխարհալուր վարդապետին:
 Սա փոխեցաւ ի մեր թուին,
 Քսան և չորս յօբելինին,
 Ի մտանել քառասուն հնգին:
 Օգոստոսի քսան ութին:
 Արդ լուարուք սոյն գոչողին.

Ազաղակի անմուռնչ ձայնին.

Ո՛վ անցաւոր ազգ մարդկային

Առ ի գթալ տալ զոգորմին: (Երեւակ. Հատ. Գ. էջ

9, 1858):

Համատանցին ունի աշխատութիւններ. 1788 ին Հնդկաց նուիրակութեան ժամանակ յօրինած է Աղբխր Բաղձալի խորագրով գիրքը, որ կը գտնուի Ս. Յակոբի վանքին մէջ (ՄՁ. Թ. 682): Սիմէոն կթղ. սոյն գիրքը կը գտնէ խոսեցի եւ սցրեցի և զուրկ գրական ուէ արժէքէ. (Դիւան. Գիրք Ը. էջ 585): Բացայայտ եւ պարզ հարցումն եւ պատասխանի դաւանութեան հարաւոր ուղղափառ եւ յուսաւորչածին ազգիս Հայոց աշխատութիւնը Համատանցին գրած է Փրանկ հայերու դէմ. այս երկու աշխատութիւնները, ինչպէս նաև դարձեալ լատինացեալ հայերու դէմ իր տաճկերէն մէկ գործը կը մնան անտիպ: (Անդ. Գիրք. Ժ. էջ 101—102):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆՑԻ (աշնի). — Հաւանաբար Ս. Յակոբի վանքի խոհարարը, որուն կամ երկարամեայ ծառայութեանը և կամ կարեւոր մէկ նուիրատուութեանը համար խաչքար մը զետեղուած է Ս. Աթոռի Պարոնեքր կոչուած այգիին տան պատին մէջ որուն նորոգութեան ժամանակ վերջերս գտնուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Տէր. Ած. Յս. Գս. յիշատակ է շուրբ